ԳԼՈՒԽ ՆՂԷ.

Եթէ գուցէ յետ ընտնելոյ թիւ երից ամաց փոխանորդաց յաշխարհաց, ով ոք 'ի յորում աշխարհէ և փոխանակ որում գաւառէ որ իցէ որ ոչ նորոգեսցի փոխանորդս սահմանեալ ժամանակի վասն որ ոք պատճառի որ իցէ, առաքողք նոյն փոխանորդին պարտաւոր լինին ընդունել փոխանորդն իւրեանց կրկին երիս ամս տեղի փոխանորդութեան իւրեանց, և հատուցանել տանն ողորմութեան մին հազար դահեկան երծաթ տուգանս վասն յանդգնելոյ յօրինաց։

ԳԼՈՒԽ ՆՂԸ.

'Ի պատճառէ տարբերութեան ժամանակի եթէ 'ի մէնջ քաղաքաց, և կամ 'ի մէնջ բանակաց կարի ներել կամ ընդունիլ, կամ յաւելացուցանելոյ և պակասացուցանելոյ մաքսս կերակրոց զոր ինչ բարեգոյն 'ի խոստմանց ժամանակի։

ԳԼՈՒԽ ՆՂԹ.

Ամենայն վրան կանգնեցուցանելն 'ի բանակի մերոյ հարկաւոր է ըստ կարգադրութեան երկրաչափ իշխանին մերոյ և 'ի խաղալն մի տեղէ առ միւս յօրինեսցի նոյն, և ամենայն փողոց բանակի տացի անուն իւր և նշան զի դիւ-